գրութեամբ, պարզելով սղագրութիւնները:

«Յ(իսուս)ի ք(րիստոս)ի նուաստ ծառայ յ(ա)կ(ո)բ կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)ս ամ(ենայն) հայոց յորմէ հասցէ գիր սիրոյ եւ ողջունի, հանդ(ե)րձ ա(ստուա)ծային ա(ւր)հնութ(եամ)բն, առ սիրելի որդի, եւ աչ(ա)ցս լոյս սահակ վ(ա)րդ(ա)պ(ե)տիդ, եւ քոյովդ ամ(ենայն)ի ի տ(է)ր խնդալ»:

«Եւ ընդ ա(ստուա)ծապ(ա)րգեւ ա(ւր)հնութե(ան)ս ծանիր սիրելի որդի մեք գքեզ ի Բաղէշ գիտ(ա)կ էաք քանիցըս անգամ թուղթ եմ գր(ե)լ անդր, թէ եկ առ իս: Փիլ(ի)պոսն պ(ա)տմ(եա)ց մեզ, եւ քո թուղթն: Գ(ար)ձ(եա)լ գր(ա)լ էր վ(ա)ս(ն) ս(ա)րգիս վ(ա)րդ(ա)պ(ե)տն թղթի, շաքրն է տարեալ ն(ո)ր(ա) գիրն: Նոյնպ(է)ս եւ թ(ա)րվ(ի)զոյ յորդոր(ա)կն գիր, վ(ա)ս(ն) նորոգութե(ան), եւ ձեռնարկութե(ան) ս(ուր)բ եկ(ե)ղ(ե)ցոյն: Իսկ զինչ գրեմ քեզ վ(ա)ս(ն) անի(ծեա)լ ճաքառ բ(ար)սեղին, որ վ(ա)ս(ն) անիծելոյն անունդ հողի հաւ(ա)ս(ա)ր եղեւ: Իսկ այժմս այնքան թերութի(ւն) եւ յայտնի հաջելն առ մեր օրէնս: Ճշմ(ար)տիւ գրեմ, եթէ այլ մասն ունենաս, առ այն անիծ(եա)լն մեծ դառնութի(ւն) կրելոց ես յինէն: Քանիցս աղ(ա)ղ(ա)կ եկ(ա)ւ ի թարվ(ի)զոյ, եթէ վարդան վ(ա)րդ(ա)պ(ե)տն չէր եկ(եա)լ աստ. ք(ա)ղ(ա)քի ժ(ո)ղ(ո)վ(ուր)դն ի մեր հ(ա)ւ(ա)տ(ո)յն դ(ա)ռ(նա)լ էին: Գ(ա)րձ(եա)լ ջանք արա որ այս տարիս եկ(ե)ղ(ե)ցոյն դ(ո)րծոյն զերծանիս: Խ(ա)չիկ վ(ա)րդ(ա)պ(ե)տն բաղդ(ա)տ(ո)յ վր(այ) ող(ա)րկ(ե)ցի ի սպ(ա)հան: Իսկ մեր աստ գալն մեր պ(ա)րտուցն այնք(ա)ն օգուտ չեղեւ բ(ա)յց շն(ուր)հօք ս(ուր)բ հողոյն այնպ(էս) սիրով ժ(ո)ղ(ո)վրդեան մէջն խ(ա)ղ(ա)ղութի(ւն) եւ միաբ(ա)նութի(ւն) եղեւ զոր ինչ աս(ա)ց(ա)ք լսօղէն. եւ թղթով արձան(ա)գ(ո)ւց(ա)ք. ա(ւր)հնթ(եամ)բ եւ անիծիւք փակեց(ա)ք: Եկ(ե)ղ(ե)ցաց պ(ա)րտքն ժ(ո)ղ(ո)վ(ր)դեան վ(ե)ր(ա)ձգեցաք: Փաշայն եւս է բարեբարոյ աւել բէգլիթէցն վերցուց: Զայնիւ մոնիտիկին (մունետիկին): Ճշմ(ար)տիւ ք(ա)ղ(ա)քս. Բ (երկու կ(ո)ղմն(ա)քն այլ ցնծան, եւ խնդան ի գալս մեր եւ երկու(թ)ե(ան) անուն բարձաւ ի միջոյ: Միթէ ող(ո)րմ(ա)ծ ա(ստուա)ծ գթայ մեղապ(ա)րտիս որ ամէն ք(ա)ղ(ա)ք եւ երկիր այսպ(էս) եղնի. ուր որ մտ(եա)լ ենք որ եղեալ է: Իսկ այժմս գն(ա)ցի հզօր, բ (երկու) գ (երեք) շաբաթ անդ մնամ բոլորքն մ(ար)դ ող(ա)րկեմ, եւ ես դ(ա)ռն(ա)մ ի ք(ա)ղ(ա)քս, ժ (տասը) օր մնամ. տ(է)ր առ(ա)ջ(նոր)դէ վ(ա)րդ(ա)վ(ա)ռն ի սեփ(ա)ստ(եա)յ կ(ա)տ(ա)րեմք, եւ անտուստ ի թող(ա)թ: Զինչ տ(եառ)ն հաճոյ է տ(է)ր դայն առ(ա)ջ(նոր)դէ: Սիրելի որդի զինչ որ առնէս առնէս առանց մ(ի)ք(ա)յէլ վ(ա)րդ(ա)պ(ե)տին հր(ա)մ(ա)նին չշարժիս, մինչ ջուր ըմպելո եւս հարց, սիրելի որդիս: Իսկ յ(ա)ղ(ա)գս տաճիկ գոլոյն մի ինչ հոգ լիցի քեզ. զինչ որ պ(ա)ր(ո)ն նազարն ասէ այնպէս շարժի: հաջի իսմ(ա)յ(ե)լն լուեալ է գալ տաճկին, գր(եա)լ է առ մեզ մի ինչ հոգար ոչ թէ ապր(ա)նքս միայն, գլուխս եւս քո ուղուրին (բախտին) է: Ծովով գն(ա)ց(եա)լ է ի ստ(ա)նպ(ո)լ որ այս տաճիկս դ(ա)րձ(ո)ւց(ա)նէ: Զինչ տ(եառ)ն հ(ա)ճ(ո)յ է դայն առ(ա)ջ(նոր)դէ: Զքո որպիսութի(ւ)ն, դ(ո)րծ(ո)յդ, եւայլ տեղ զա(մենե)ց(ուն) գրեա մեզ»:

Այս նամակը որ կարեւոր է Յակոբ Ջուղայեցի կենսագրութեան ժամանակագրական այս մասին համար, ցոյց կուտայ որ Հզօրի մէջ էր (ծանօթ իբր Հազու կամ Խզու) կ'երեւի դէպի Տիգրանակերտ իր ճանապարհին վրայ: Գուցէ եւ նամակը Տիգրանակերտէն գրուած է եւ Հզոր հանդիպելէ վերջն ան մտադիր էր Սեբաստիա եւ անկէ ալ Թոգատ (Եւդոկեայ) հանդիպիլ Կ. Պոլիս անցնելու համար: Հաճի Իսմայէլը հաւանաբար երեւելի թուրք մըն էր ի Տիգրանակերտ, պաշտպան Ջուղայեցիի, որ իմանալով որ Պոլսէն արքունի հրամանաւ պաշտօնեայ մը ղրկուած է Ջուղայեցին Կ. Պոլիս տանելու համար, ինքը նամակ մը գրեր է Ջուղայեցիին ըսելով որ «հոգ մի ընէր ես ոչ միայն իմ ինչքովս, այլ եւ գլուխս իսկ քու բախտիդ» կը տրամադրեմ: Նոյն